կան ցեղիցն է, որ Աբաղա գաշտիցն է անցել Թայչաբարայ հովիտը։ Դորանք դիմել են շահին, որը ողորմածաբար դրանց երկիր և իշխանութիւն է պարգևել։ Ահա ինչ դիւրին կերպով է հիմնվում վասալական իշխանութիւնը Պարսկահայաստանի մէջ։ Ճշմարիտ խոստովանել, ինձանում ևս ցանկութիւն ծնուեց խան դառնալու։

Հատ դժուար է մի այդպիսի աշխարհի համար բնակիչների ճիշտ թուանշանը ասել, ուր աշխարհագիր երբէք չէ եղել։ Մօտաւորապէս կարելի է երեք խանութիւնների մէջ վեց հազար նստական ժողովուրդ և երկու հազար թափառական քրդեր հաշուել։

Երկրի գիւղատնտեսական վիճակը ոչ մի բանի նման չէ։ Իսկապէս ասել, այդ երկրումը ապրում չէ ժողովուրդ, այլ մի տեսակ անասուններ, որոնք իւրեանց բոլոր էութեամբ պատկանում են տիրապետողին։ Գերիները այն առաւելութիւնը ունին, որ գոնէ նրանք կուշտ են փորով, մերկութիւնը պատսպարուած է։ Ուղղակի հարկը ծանր չէ, ամեն ծուխ պարտական է մի չերվոնեց վճարել տարին, բայց անուղղակի տուրքեր բազմաթիւ են։ Ինչ որ խանը վճարում է իւրանից զօրեղ անձնաւորութիւններին ընծայի կամ կաշառքի անունով, մի խօսքով, խանի արած ամեն ծախսերը հպատակներն են